*Հավելված 6*
*«ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -24/14»* ծածկագրով*
*ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի*

# ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ν ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -24/14-3

ք. Վանաձոր « 2 » փետրվարի 2024 թ.

<<Վանաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ -ն ի դեմս տնօրեն Վ.Մկրտչյանի, որը գործում է ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ ի դեմս տնօրեն՝ Ա.Ասատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Ν 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանների խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3428360/ երեք միլիոն չորս հարյուր քսանութ հազար երեք հարյուր վաթսուն/ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ______ օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[3]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական միջոց, ապա երաշխիքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսվածմատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[4] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ո պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[5]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[6]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[7]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[5] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42
<ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/ղ
Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592

Տնօրեն
Վ.Մկրտչյան
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Նատալի ֆարմ» ՍՊԸ
ք.Երևան, Օհանովի փող 15/1
«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*« 02 » 02 2024 թ. կնքված*
*ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -24/14-3 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր քանակը | գինը/ՀՀ դրամ | գումար | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 10 | 33141136 | Արտածծման կատետր CH12 **Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Արտածծման կատետր N 12, CH 12 ստերիլ: | հատ | 2000 | 47 | 94000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 2000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 11 | 33141136 | Արտածծման կատետր CH18 **Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Արտածծման կատետր N 18, CH 18 ստերիլ: | հատ | 3000 | 47 | 141000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 3000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 19 | 33141100 | Գինեկոլոգիական հավաքածու 1 հատ: Ֆոլկմանի գդալիկով **Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Գինեկոլոգիական հավաքածու՝ ստերիլ, մեկանգամյա օգտագործման: Հավաքածուն իր մեջ պետք է ներառի՝ տակդիր չափսը 40-50սմ, Ֆոլկմանի գդալիկ տիպ B, ստերիլ ձեռնոց 1 | հավաք | 9000 | 35,29 | 317610 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 9000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | գույք, Կուսկոյի հայելի չափսը M, կենտրոնական ֆիքսատորով, Ցիտոլոգիական խոզանակ և այլ պարագաներ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Գործարանային փաթեթավորմամբ: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | | | | | | | |
| 20 | 33141100 | Գիպսակապ 3մ x20 սմ<br>Եվրոմեդ | Բինտգիպսե: Չափսերը՝ 3մ x 20սմ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատների առկայություն: | հատ | 1200 | 244 | 292800 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 1200 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 44 | 33141136 | Կատետր N22 ներերակային թիթեռնիկ<br>Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ | Կատետր N22ներերակային թիթեռնիկ | հատ | 600 | 21 | 12600 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 600 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում, |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 71 | 33141136 | Մեզի կատետր ֆոլի N16<br>Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ | Կատետր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ N16: Ունի ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | հատ | 750 | 162 | 121500 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 750 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 72 | 33141136 | Մեզի կատետր ֆոլի N18<br>Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ | Կատետր ֆոլի երկճյուղ՝ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ N18: Ունի ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | հատ | 2000 | 162 | 324000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 2000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 73 | 33141136 | Մեզի կատետեր ֆոլի N20 Չանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ | Կատետր ֆոլի երկճյուղ՝ ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ N20: Ունի ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | հատ | 100 | 162 | 16200 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 100 | Պատվերի հայտը ներկայացնել ուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 74 | 33141136 | Մեզի կատետեր ֆոլի N22 Եվրոմեդ | Կատետր ֆոլի երկճյուղ՝ ճկուն սիլիկոնապատ կամ ռեզինե ծածկույթով: Չափսերը՝ N22: Ունի ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ և ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | հատ | 50 | 162 | 8100 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 50 | Պատվերի հայտը ներկայացնել ուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 75 | 33141136 | Մեզի կատետր ֆոլի N24<br>Զանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ | Կատետր ֆոլի երկճյուղ՝ ծկուն սիլիկոնապատ կամ ռեգինե ծածկույթով: Չափերը՝ N24: Ունի ճկուն, բարակ թափանցիկ խողովակ, երկարությունը ոչ պակաս քան 29սմ ոչ ավել քան 31սմ: Պաշտպանիչ գլխարկով: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | հատ | 50 | 215 | 10750 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 50 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 76 | 33141136 | Միզային կատետր N16 նելատոն<br>**Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ** | Նելատոն N16,ստերիլ | հատ | 2000 | 67 | 134000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 2000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 77 | 33141136 | Միզային կատետր N18 նելատոն<br>**Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ** | Նելատոն N18,ստերիլ | հատ | 200 | 67 | 13400 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 200 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 78 | 33141183 | Նազոգաստրալ զոնդ N16<br>**Հուայան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ** | Զոնդ նազոգաստրալ: Չափերը՝ 16Fr: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝2/3, 2տարուց ավել | հատ | 300 | 58 | 17400 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 300 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | | | | | | |
| 79 | 33141183 | Նազոգաստրալ զոնդ N18 **Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Զոնդ նազոգաստրալ: Չափսերը՝ 18Fr: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | հատ | 1500 | 58 | 87000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 1500 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 81 | 33141142 | Ներարկիչ 3մլ 0,6․ 30մմ 23G x 1Զ **Զանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ** | Ներարկիչ 3մլ 0,6․ 30մմ 23Gx1 1/4: Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485կամ համարժեք: | հատ | 80000 | 8,98 | 718400 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 80000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 82 | 33141142 | Ներարկիչ 5մլ 0,7-40 մմ 23G x 1 Ջ<br>**Զանգժոու Յուանդոնգ Մեդիքալ Էքվիփմենթ** | Ներարկիչ 5մլ ,0,7-40 մմ 23G x1 Ջ: Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: | հատ | 100000 | 8,98 | 898000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 100000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացույցային օրվա ընթացքում |
| 85 | 33141157 | Նշտարի կտրող գլխիկներ N22<br>**Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Նշտարի սայրեր՝ ստերիլ, մեկ անգամյա օգտագործման: Պատրաստված չժանգոտվող պողպատից կամ կարբոնային ածխածնի պողպատից: Չափսը՝ N22: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | հատ | 4700 | 15 | 70500 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 4700 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացույցային օրվա ընթացքում |
| 86 | 33141157 | Նշտարի կտրող գլխիկներ N20<br>**Հուայան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Նշտարի սայրեր՝ ստերիլ, մեկ անգամյա օգտագործման: Պատրաստված չժանգոտվող պողպատից կամ կարբոնային ածխածնի պողպատից: Չափսը՝ N20: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների | հատ | 500 | 15 | 7500 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 500 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացույցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համար առնվազն` 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | | | | | | | |
| 87 | 33141157 | Նշտարի կտրող գլխիկներ N11 **Հուսյան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Նշտարի սայրեր` ստերիլ, մեկանգամյա օգտագործման: Պատրաստված չժանգոտվող պողպատից կամ կարբոնային ածխածնի պողպատից: Չափսը` N11: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը` մինչև 1տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 75%, 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն` 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ` ISO13485 կամ ГОСТ Р ИСО 13485 կամ համարժեք: | հատ | 3000 | 15 | 45000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 3000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 98 | 33141183 | Մուցցող զոնդ N 8 **Հուսյան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Մուցցող զոնդ N 8 | հատ | 300 | 34 | 10200 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 300 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 100 | 33141120 | Ստերիլ պորտասեղմիչ **Հուսյան Էնչել Մեդիքալ Ինսթրմենթ** | Ստերիլ պորտասեղմիչ: | հատ | 2000 | 29 | 58000 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 2000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 104 | 33161220 | Փայտե շպատել<br>**Հուսյան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ** | Ճպատել փայտե՝ ոչ ստերիլ։ Երկարությունը՝ ոչ պակաս քան 140մմ և ոչ ավել 160մմ, լայնությունը՝ ոչ պակաս քան 16մմ և ոչ ավել 20մմ։ | հատ | 5000 | 2,98 | 14900 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 5000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 105 | 33161220 | Փայտե շպատել Ախտահանված<br>**Հուսյան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ** | Ճպատել փայտե՝ախտահանված։ Երկարությունը՝ ոչ պակաս քան 140մմ և ոչ ավել 160մմ, լայնությունը՝ ոչ պակաս քան 16մմ և ոչ ավել 20մմ։ | հատ | 5000 | 3,1 | 15500 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 5000 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |
| 115 | 33141131 | Արնեկանգ լարան փականով<br>**Հուսյան Էնջել Մեդիքալ Ինսթրմենթ** | Արնեկանգ լարան կտորից /փականով/։ | հատ | 160 | 201,68 | 32268,8 | Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42, | 160 | Պատվերի հայտը ներկայացնելուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում |

*****Մատակարարումը կատարել աշխատանքային օրերին, ժամը՝ մինչև 15:00:

ԳՆՈՐԴ
«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42
<ՀայԷկոնոմբանկ>Վանաձոր մ/դ
Հ/Հ 1150004484110100
ՀՎՀՀ 06945592

Վ.Մկրտչյան

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի ֆարմ» ՍՊԸ
ք.Երևան, Օհանովի փող 15/1
«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Մ.Սաատրյան
---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 02 » 02 2024 թ. կնքված*
*ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ -24/14 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 10 | 33141136 | Արտածծման կատետր CH12 | | | 9400 | 18800 | 28200 | 37600 | 47000 | 56400 | 65800 | 75200 | 84600 | 94000 | 94000 |
| 11 | 33141136 | Արտածծման կատետր CH18 | | | 14100 | 28200 | 42300 | 56400 | 70500 | 84600 | 98700 | 112800 | 126900 | 141000 | 141000 |
| 19 | 33141100 | Գինեկոլոգիական հավ. ֆոլկմանի գդալ իկով | | | 31761 | 63522 | 95283 | 127044 | 158805 | 190566 | 222327 | 254088 | 285849 | 317610 | 317610 |
| 20 | 33141100 | Գիպսակապ 3մ x20սմ | | | 29280 | 58560 | 87840 | 117120 | 146400 | 175680 | 204960 | 234240 | 263520 | 292800 | 292800 |
| 44 | 33141136 | Կատետր N 22 ներերակային թիթեռնիկ | | | 1260 | 2520 | 3780 | 5040 | 6300 | 7560 | 8820 | 10080 | 11340 | 12600 | 12600 |
| 71 | 33141136 | Մեզի կատետր ֆոլի N 16 | | | 12150 | 24300 | 36450 | 48600 | 60750 | 72900 | 85050 | 97200 | 109350 | 121500 | 121500 |
| 72 | 33141136 | Մեզի կատետր ֆոլի N 18 | | | 32400 | 64800 | 97200 | 129600 | 162000 | 194400 | 226800 | 259200 | 291600 | 324000 | 324000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 73 | 33141136 | Մեզի կատետեր ֆոլի N 20 | | | 1620 | 3240 | 4860 | 6480 | 8100 | 9720 | 11340 | 12960 | 14580 | 16200 | 16200 |
| 74 | 33141136 | Մեզի կատետեր ֆոլի N 22 | | | 810 | 1620 | 2430 | 3240 | 4050 | 4860 | 5670 | 6480 | 7290 | 8100 | 8100 |
| 75 | 33141136 | Մեզի կատետեր ֆոլի N 24 | | | 1075 | 2150 | 3225 | 4300 | 5375 | 6450 | 7525 | 8600 | 9675 | 10750 | 10750 |
| 76 | 33141136 | Միզային կատետեր N 16 նելատոն | | | 13400 | 26800 | 40200 | 53600 | 67000 | 80400 | 93800 | 107200 | 120600 | 134000 | 134000 |
| 77 | 33141136 | Միզային կատետեր N 18 նելատոն | | | 1340 | 2680 | 4020 | 5360 | 6700 | 8040 | 9380 | 10720 | 12060 | 13400 | 13400 |
| 78 | 33141183 | Նազոգաստրալ զոնդ N16 | | | 1740 | 3480 | 5220 | 6960 | 8700 | 10440 | 12180 | 13920 | 15660 | 17400 | 17400 |
| 79 | 33141183 | Նազոգաստրալ զոնդ N18 | | | 8700 | 17400 | 26100 | 34800 | 43500 | 52200 | 60900 | 69600 | 78300 | 87000 | 87000 |
| 81 | 33141142 | Ներարկիչ 3մլ 0,6 _ 30 մմ 23G x 1 Ω | | | 71840 | 143680 | 215520 | 287360 | 359200 | 431040 | 502880 | 574720 | 646560 | 718400 | 718400 |
| 82 | 33141142 | Ներարկիչ 5մլ 0,7 _ 40 մմ 23G x 1 Ω | | | 89800 | 179600 | 269400 | 359200 | 449000 | 538800 | 628600 | 718400 | 808200 | 898000 | 898000 |
| 85 | 33141157 | Նշտարի կտրող գլխիկներ N22 | | | 7050 | 14100 | 21150 | 28200 | 35250 | 42300 | 49350 | 56400 | 63450 | 70500 | 70500 |
| 86 | 33141157 | Նշտարի կտրող գլխիկներ N20 | | | 750 | 1500 | 2250 | 3000 | 3750 | 4500 | 5250 | 6000 | 6750 | 7500 | 7500 |
| 87 | 33141157 | Նշտարի կտրող գլխիկներ N11 | | | 4500 | 9000 | 13500 | 18000 | 22500 | 27000 | 31500 | 36000 | 40500 | 45000 | 45000 |
| 98 | 33141183 | Սնուցող զոնդ N 8 | | | 1020 | 2040 | 3060 | 4080 | 5100 | 6120 | 7140 | 8160 | 9180 | 10200 | 10200 |
| 100 | 33141120 | Ստերիլ պորտասեղմիչ | | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 34800 | 40600 | 46400 | 52200 | 58000 | 58000 |
| 104 | 33161220 | Փայտե շպատել | | | 1490 | 2980 | 4470 | 5960 | 7450 | 8940 | 10430 | 11920 | 13410 | 14900 | 14900 |
| 105 | 33161220 | Փայտե շպատել ախտահանված | | | 1550 | 3100 | 4650 | 6200 | 7750 | 9300 | 10850 | 12400 | 13950 | 15500 | 15500 |
| 115 | 33141131 | Արնեկանգ լարան փականով | | | 3227 | 6454 | 9681 | 12908 | 16134 | 19361 | 22588 | 25815 | 29042 | 32269 | 32268,8 |

:

** իրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ | «Նատալի ֆարմ» ՍՊԸ |
| Ք.Վանաձոր, Գ.Նժդեհի 2/42 | ք.Երևան, Օհանովի փող 15/1 |
| <ՀայԲիզնեսբանկ>Վանաձոր մ/դ | «Ամերիաբանկ»ՓԲԸ |
| Հ/Հ 1150004484110100 | Հ/Հ 1570005065330100 |
| ՀՎՀՀ 06945592 | ՀՎՀՀ 01222567 |
| | Տնօրեն՝ Ա.Ասատրյան |
| Գ.Մկրտչյան | /ստորագրություն/ |
| | Կ.Տ |